INTERNATIONAL MONETARY FUND
EXTERNAL RELATIONS DEPARTMENT

Մամլո հաղորդագրություն No.00/09
6 մարտի, 2009 թ.

Արժույթի միջազգային հիմնադրամ
Վաշինգտոն, 20431 ԱՄՆ

ԱՄՀ-ն հաստատում է 540 միլիոն դոլարի Օժանդակության վարկային ծրագիրը (Stand-By Arrangement) Հայաստանի համար

Արժույթի միջազգային հիմնադրամի Գործադիր խորհուրդն այսօր հաստատեց 28 ամիս տևողությամբ 368 միլիոն ՍԴՌ-ի (շուրջ 540 միլիոն դոլար) Օժանդակության վարկային ծրագիրը, որը միտված է գլոբալ ճգնաժամի հետևանքների հաղթահարմանը, ազգային արժույթի և ֆինանսական համակարգի նկատմամբ վստահության վերականգմանը և կարիքավոր խավերի պաշտպանությանը: Ծրագրի հաստատման արդյունքում Հայաստանին անմիջապես հատկացվելու է 161.5 միլիոն ՍԴՌ (շուրջ 237 միլիոն դոլար), իսկ վարկի մնացած գումարը կտրամադրվի 9 մասնավճարներով՝ ըստ եռամսյակային դիտարկումների: Օժանդակության վարկը, կազմելով Հայաստանի բաժնեչափի շուրջ 400 տոկոսը, ԱՄՀ-ի միջոցներից օգտվելու բացառիկ հնարավորություն է: Այն հաստատվել է ԱՄՀ-ի Հատուկ ֆինանսավորման մեխանիզմների գծով արագացված ընթացակարգի համաձայն:

Հայաստանի կառավարության ծրագիրը հիմնված է մի շարք հետևողական միջոցառումների վրա, որոնք իրականացվում են փոխարժեքի, դրամավարկային, ֆինանսական և հարկաբյուջետային քաղաքականությունների գծով և շարունակական կառուցվածքային բարեփոխումների ծրագրի ներքո:

Ծրագրի գերակայություններն են.

- **Վերադարձ ճկուն փոխարժեքային քաղաքականության:** Մարտի 3-ին Հայաստանի կենտրոնական բանկը (ՀՀ ԿԲ) հայտարարել է, որ, ծայրահեղ անկայուն իրավիճակների մեղմացման դեպքերից զատ, այլևս չի միջամտի արտարժութային շուկային և 100 բազիսային կետով բարձրացրել վերաֆինանսավորման տոկոսադրույքը: Այդ հայտարարությունից անմիջապես հետո ազգային դրամն արժեզրկվեց մոտ 20 տոկոսով, ապա հիմնականում կայունացավ այդ միջակայքի սահմաններում:

- **Ֆինանսական հատվածի հզորացում՝ կայունություն և վստահություն ապահովելու նպատակով:** ՀՀ ԿԲ-ի քաղաքական արձագանքը հիմնված է հետևյալ հիմնարար սկզբունքների վրա. անհրաժեշտության դեպքում

իրացվելիությանը նպաստելուն միտված գործարքների իրականացում և կատարելագործված բանկային վերահսկողություն:

- **Մակրոտնտեսական կայունացման նպատակով հարկաբյուջետային գերակայությունների վերանայում,** միևնույն ժամանակ ապահովելով սոցիալական ծախսերի և պետական ներդրումների անհրաժեշտ մակարդակը, հարկային եկամուտների հավանական թերհավաքագրման պայմաններում: Հայաստանի իշխանությունները մտադիր են նվազեցնել բյուջեի ոչ-առաջնահերթային ծախսերը և միաժամանակ ավելացնել սոցիալական ապահովության գծով ծախսերը ՀՆԱ-ի 0.3 տոկոսի չափով, լուծելով խոցելի խավերի խնդիրները հասցեագրված սոցիալական ծրագրերի միջոցով: Պետական ներդրումների խրախուսման նպատակին կծառայի լրացուցիչ արտաքին ֆինանսավորումը:

Կանխատեսվում է, որ 2009 թ. համախառն արտաքին ֆինանսավորման գծով Հայաստանի պահանջարկը կազմելու է մոտ 1.6 միլիարդ դոլար, ընդ որում աճի միտումը որոշ դանդաղեցմամբ կպահպանվի մինչև 2011 թվական: Աջակցության վարկը թույլ կտա 2009-2011 թթ. ընթացքում զգալիորեն կրճատել ֆինանսական ճեղքվածքը: Լրացուցիչ ֆինանսավորում կտրամադրվի նաև դոնոր կազմակերպությունների և միջազգային գործընկերների, այդ թվում՝ Համաշխարհային բանկի կողմից:

Գործադիր խորհրդի կողմից Հայաստանյան քննարկման ավարտից հետո ԱՄՀ-ի Գործադիր փոխտնօրեն և նախագահի պաշտոնակատար պարոն Մուրիլո Պորտուգալն ասաց.

«Այն բանից հետո, երբ 2008 թ. նոյեմբերին հաստատվեց ԱԿՏԱ սահմանափակ վարկային ծրագիրը, Հայաստանը ստիպված եղավ դիմակայելու հարատևական արտաքին ցնցումների: Համաշխարհային տնտեսական իրավիճակի վատթարացման հետևանքով զգալիորեն կրճատվեց մասնավոր փոխանցումների և կապիտալի ներհոսքը, միևնույն ժամանակ միջազգային գների կտրուկ անկումը բացասաբար ազդեց ծանր արդյունաբերության արտադրության և արտահանման մակարդակի վրա: Միջազգային պահուստների արագ կրճատման և ֆինանսավորման աճող պակասուրդի պայմաններում Հայաստանի իշխանությունները դիմեցին ԱՄՀ-ին լրացուցիչ ֆինանսական օժանդակություն ստանալու համար:

Անբարենպաստ համաշխարհային զարգացումներից ելնելով 2009 թ. սպասվում է իրական աճի կրճատում, որը պայմանավորված է Ռուսաստանում և այլ հարևան երկրներում արձանագրված տնտեսական անկումով: Միջազգային գների, տնտեսական աճի անկումը, ինչպես նաև ազգային դրամի արժեզրկումը կնպաստեն արտաքին ընթացիք հաշվեկշռի պակասուրդի կրճատմանը: Միջնաժամկետ հեռանկարը շարունակում է բարենպաստ մնալ: Սակայն Հայաստանը խոցելի է տարածաշրջանային հնարավոր հետագա տնտեսական անկման և քաղաքական լարվածության առջև:

Մակրոտնտեսական կայունության պահպանման համար անհրաժեշտ է իրականացնել ողջամիտ քաղաքականություն: Ճկուն փոխարժեքային քաղաքականության վերհաստատումը թույլ կտա մեղմացնել միջազգային ճգնաժամի հետևանքները և հետագա անկումը տարածաշրջանում: Արժեզրկման պատճառով առաջացող գնաճային ճնշումներին դիմակայելու և դրամային արտահայտությամբ ակտիվների նկատմամբ պահանջարկը խթանելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել կոշտ դրամավարկային քաղաքականություն: Թեպետ քիչ հավանական է, որ արժեզրկումը բացասաբար կանդրադառնա նաև ֆինանսական հատվածի վրա, սակայն նման զարգացումները կանխելու նպատակով մշակվել են համապատասխան ծրագրեր: Եկամուտների հավանական թերհավաքագրման պայմաններում, կշարունակվի իրականացվել շրջահայաց հարկաբյուջետային քաղաքականություն, ոչ-առաջնահերթ ծախսերի կրճատման շնորհիվ կապահովվեն բյուջեի սոցիալական ծախսերը և պետական ներդրումները:

«Կառուցվածքային բարեփոխումների օրակարգի պահպանումը կնպաստի մակրոտնտեսական կայունությանը և գործարար մթնոլորտի հետագա ձևավորմանը: Ներկա գերակա խնդիրներն են հարկային և մաքսային վարչարարության բարեփոխումների անավարտ ամփոփումը և ֆինանսական հատվածի բարեփոխումների հետագա իրականացումը»:

«ԱՄՀ-ն վստահ է, որ Հայաստանի իշխանությունների կողմից իրականացվող քաղաքականությունները հետևողական բնույթ են կրում և դրված են ամուր հիմքերի վրա» նշեց պարոն Պորտուգալը: